

չնորհաց առատաձիր զեղման խորրհդաւոր ժամին, — յիշելով միանգամայն, որ 1600-րդ տարին բոլորում է այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հովանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայութեան՝ դարերի յորձանքի դէմ:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Ա.

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Գեր. Տ. Գէորգ արքեպս. ի առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմրէթի, որով արտօնեցաւ հրաւիրել գործավար մի վասն վիճ. կոնսիստորիային. թ. 629:

— Յանուն Ամեն. Տ. Մաղաքիա արքեպս. ի Պատրիարքի Հայոց Թուրքիոյ, որով հաստատեցաւ նախկին վճիռն Հայրապետական, լուծեալ գոլոյն պսակի Կարապետի Տէրունեան ընդ կնոջն Աղաւնիի Գազէզեան. թ. 631:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնելով զարձակմանէ անդամոյ նորին Գեր. Տ. Յուսիկ Եպիսկոպոսի ի պաշտամանէն ըստ Բարձրագոյն հաճութեան համաձայն խնդրոյ

նորա՝ պատուիրեցաւ կազմել օրագիր և արձակեալ համարել զնա յանդամութենէ Սինոդի և տալ զիսել զարձակմանէն Նորին Գերապատուութեան. թ. 633:

— Յանուն Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, որով շնորհաւորեցաւ օծումն նորա ի կաթողիկոսութիւն Աթոռոյն Կիլիկիոյ. թ. 634:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, ընդ որում վերադարձուցանելով զօրագիր նորին, յայտնեցաւ եթէ պատուիրեալ է վանական կառավարութեան Մայր Աթոռոյ յղել յարօտատեղին Ամբերդ զոչխարս վանուց, ուստի և աւելորդ համարի տալ ի վարձու զսրօտատեղին զայն. թ. 638:

— Յանուն Տ. Մուշէ վարդափոխանորդի Հայոց Նորոյն Նախիջևանի և նորընաիր հոգաբարձուաց Հոգ. Գպրանոցի Հայոց տեղւոյն, որով հաստատեցան ի պաշտաման Հոգաբարձութեան. թ. 641:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնելով զարձակմանէն ի կարգէ հարկատուաց Յովել վարդափոխ, պատուիրեցաւ ընդունել ի հոգևոր կոչումն ի միաբան վանուցն Հառիճոյ. թ. 674:

— Յանուն Գեր. Տ. Գէորգ արքեպսոփ թեմակալի Հայոց Վրաստանի և Իմլէթի, որով առաջադրեցաւ թողուլ անպահանջ յեղիշէ վարդապետէ Մուրատեան զփոխարինարար տուեալ նմա զ100 բուրլին ի Հոգևոր կառավարութենէ Ախալցխոյ. թ. 700:

— Յանուն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգևոր թեմ. գպրանոցի Տփիսեաց, որով պատուիրեցաւ ընդունել երկուս որդեգիրս ի գպրանոցն ի վիճակէն Նուխույ. թ. 702:

— Յանուն Առաջնորդի Հայոց Ատրպատականի Տ. Եղիշէ Ծ. վարդափոխ, որով լուծեալ համարեցաւ պսակն Դավրիժեցի Յակոբայ Բարայեան ընդ կնոջն Վարդանուշի Մելիք Յակոբեան, տալով իրաւունս երկոցունցն ևս մասնելոյ ի նոր ամուսնութիւն. թ. 72:

— Յանուն թեմակալի Հայոց Վրաստ. և Իմլէթի Գեր. Տ. Գէորգ արքեպսոփ, որով պատուիրեցաւ արձակել զՏեառն Ներսիսեան գպրանոցին զպ. Ս. Բալաղեանն. թ. 733:

— Յանուեն նորին, որով պատուիրեցաւ տալ ուսուցչի նոյն դպրանոցի պ. Նիկողայոսի Տ. Յարութիւնեան (Յարոյ) երեքհարիւր բուրլի կենսաթոշակ ի տարին. թ. 734:

— Յանուեն փանահօր ս. Սարգիս ուխտատեղւոյն Տրփիւեաց Տ. Տիրայր վարդ. ի, որով պատուիրեցաւ տալ մի հազար բուրլի Տ. Մեսրոպ վարդ. ի ի կալուածական արդեանց և յեկամոց փանուցն ի գնել իրեղէնս փան հիւրատան Մայր Աթոռոյ. թ. 741:

— Յանուեն Գեր. Տ. Գրիգոր եպս. ի Առաջնորդի Հայոց Արցախայ, որով ազատ համարելով զՏ. Բենիկ վարդ. ի պաշտամանէ Տեսչի թեմական Դպրանոցի Շուշուոյ, պատուիրեցաւ տալ նմա զռոճիկ նորին մինչ ցվերջ Սգոստոսի տարւոյս. թ. 756:

— Յանուեն Հոգ. կառավարութեան Հայոց Կարուց, որով լուծեալ համարեցաւ պսակն Տաճկահպատակ Մելքոնի Սերովբեան ընդ Առլաս անուն կնոջն, տալով իրաւունս առնմտանելոյ ի նոր ամուսնութիւն. թ. 757:

— Ընդհանրական յանուեն հայ ժողովրդեան թեմին Շամախուոյ, որով յայտնեցաւ եթէ Գեր. Տ. Անանիա եպս. ի հաստատեալ է թեմակալ Առաջնորդ վիճակին. թ. 772:

— Յանուեն Գեր. Տ. Անանիա եպս. ի, որով յայտնելով զհաստատութենէ նորա ի թեմակալ Առաջնորդ վիճակին Շամախուոյ, պատուիրեցաւ մեկնել ի պաշտօնավայրն իւր. թ. 773:

— Յանուեն վիճ. կոնսիստ. Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով լուծեալ համարեցաւ պսակն Տաճկահպատակ Դարբիէլի Խուպէսէրեանց Ամասիացւոյ ընդ կնոջ նորա Նեկտարիեայ Յարութիւնեան Չուանեանց, տալով կնոջն իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն. թ. 774:

— Յանուեն Ամեն. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ Տ. Մաղաքիա արքեպս. ի, որով յանձնարարեցաւ հոգալ զնորոգութենէ եկեղեցւոյն Հայոց Էփէրիկի Կեսարիոյ. թ. 784:

— Յանուեն Նախագահի և Հոգարարձութեան թեմակ. դպրանոցին Երևանի, որով հաստատեցաւ որոշումն նորին յաղագս ազատ կացուցանելոյ յուսուցչութենէ դպրանոցին

զպարոնայո՛ Աղարէզ Արշակունի, Աղամ Աղամեան և Թովմաս Սարուխանեան. [Թ. 796:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ մատուցանել զմանրամասն հաշիւ մտից Տպարանի Մ. Աթոռոյ. [Թ. 805:

— Յանուն Երեւանցի Գէորգայ Տ. Իսահակեան, որով արտօնեցաւ նմա և ամուսնոյ նորա յետ մահու նոցա [Թաղիլի զաւթի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քաղաքին. [Թ. 811:

— Յանուն Տ. Կորիւն վարդ.ի, որով պատուիրեցաւ գնալ ի վանս Զարեքայ յաղագս ստուգելոյ զղրութիւն վանուցն և անտառին. [Թ. 813:

Հայրապետական պարգեւք.

Ծնորհեցաւ լանջախաչ վարդապետական Հոգեշնորհ Տ. Վահան Տ. վարդապետի ստոր. փոխ. Բուլկարիոյ. [Թ. 782:

Ծնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան Լուսարարի ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Բագուայ Տ. Ղևոնդ քահ.ի Աստուածատրեան. [Թ. 688:

Ծնորհեցան իրաւունս կամիլաւկայի Տ. Թադէոս քահ. ի Կորժինեանց Աստրախանի և Տ. Նիկողայոս քահ.ի Երզնկեան Կումիս գեղջ Տփլսեաց. [Թ. 683. 749:

Ծնորհեցան լանջախաչ քահանայականք հետեւալ հարց քահանայից Տաճկահպատակաց. Յովհաննէս աւագ քահ.ի Շահպաղեան Սամաթիոյ, Կարապետ քահ.ի Արմաշու, Բարդուղիմէոս աւագ քահ.ի Առաջն. փոխ. Տրապիզոնի, Աւետիք քահ.ի Տ. Եղիայեան Առաջն. փոխ. Բաղդատու, Կարապետ քահ.ի Սանտալճեան Գատըքէոյի, Խաչատուր քահ.ի Դերձակեան, Վահան քահ.ի Տ. Դրիգորեան Պալաթու, Արսէն աւագ քահ.ի Բէշիքթաշի, Ներսէս աւագ քահ.ի Տոպրաշեան Նիկողիմիոյ, Եփրեմ քահ.ի Բրուսայի և Յովհաննէս աւագ քահ.ի Շահինեան Տիգրանակերտի:

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն պ. Համբարձումայ Երամկան, Հիմնադրի Հայկական որբանոց վարժարանի Վանայ, թ. 647:

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Մարտի 24. Սինոգը կարեւոր չը համարելով Աղեքսանդրապօլ գաւառի Նալբանդի գիւղի համար երկրորդ քահանայ ունենալը՝ մերժեց Երեանի թեմ. ատեանի միջնորդութիւնը Աստուածատուր Տ. Իսրայէլեանցի ձեռնադրութեան համար: Գիւղը բաղկացած է 100 տնից, ունի մի քահանայ:

— Մարտի 24. Կարեւոր չը համարելով Շուշուայ գաւառի Չղարտի գիւղի համար երրորդ քահանայ ունենալը՝ մերժեց Վարաբաղի թեմ. ատեանի միջնորդութիւնը Գրիգոր Տ. Յովհաննիսեանի ձեռնադրութեան համար: Գիւղը բաղկացած է 130 տնից եւ ունի երկու քահանայ:

— Մարտի 24. Պատուիրել Երեանի թեմ. ատեանի միջոցով Կարսի Հոգեւոր կառավարութեան, ընդունելու իր տեսչութեան տակ Կարս քաղաքի երկյարկանի տունը եւ տասը կրպակները, տալով տեղեկութիւն Տփլիսի դատաստանական պալատին իր վճռի պատճէնը ստանալու մասին:

— Մարտի 28. Պատուիրել Տփլիսի թեմ. ատեանին, բարձրագոյն թոյլտուութեան համաձայն թոյլ տալ իրենց ծխականների հետ Տաճկաստանից Ռուսաստանի Քուլթայիսի, Չերնոմորեայ, Կարսի եւ Կուբանի շրջանները գաղթած տաճկահայատակ Տ. Փիլիպպոս, Տ. Կարապետ, Տ. Աւետիս, Տ. Զաւէն, Տ. Մկրտիչ եւ Տ. Վաղինակ քահանաներին քահանայագործելու, ընդունելով նոցա ի շարս հոգեւորականութեան, նախապէս երգուեցնելով բոլորին ըստ օրինի Ռուսաց Կայսերու-